

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ կէս օրէն չորս ժամ ետքը ցաւ մարի և կայսերական նաւուց թնդանօթնէրը բարձրագոյն աւետեցին Սահմանականաց Պայրաթի տօներուն սկսիլը։ Ըմեն տեսակ (Օսմանեան) նաւերը իսկոյն գոյնգոյն դրօշակներով զարդարուեցան։ Սայրաքաղաքին նեղուցըն ու նաւահանգիստը որ բնականապէս գեղեցիկ են, կարծես թէ ծաղկազարդ պարտէզներու փոխուեցան։

Հետեւեալ կերպով օրը Պայրաթի տօնախմբութեան ամենափառաւոր հանդէսը կատարուեցաւ։

Ընաւօտուն ամեն նախարարները և բարձր աստիճանի պաշտօնեայնները թէ Բարձրագոյն դրան և թէ կայսերական բանակին ու ծովային զօրաց մեծ գործակալները, Իւլէմայի (գիտնոց ըստ օրինաց և կրօնից) կարգին գլխավոր անդամները բոլորն ալ հանգիստաւոր զգեստներ հագած թօփ գափուի արքունի պալատը գումարուեցան։ Ահագիւր Սուլթանը, (որուն առջեւ են կարգաւ կերթային յիշեալ պաշտօնեայնները իւրաքանչիւր ըստ կարգի և աստիճանի) Պապի Հիւմայունէն (կայսերական դռնէն) ելլելով՝ Սուլթանը (Համեմատելով զնայ) և Համբուս մէկ ծայրէն մէկալ ծայրը երկու կողմէն երկու կարգ զօրք կային։ Երկուստեք խումբերը տեղ տեղ զմայլեցուցիչ եղանակներով մեծազօր ինքնակալին գալուստը կը շնորհաւորէին։ Օրաց գունդերը և ժողովրդեան մեծ բազմութիւնը կայսեր անցնելու ճամբուն վրայ կեցած՝ իրենց սրտին ուրախութիւնը հալար կոչէ իւրեք (պին եաշա փառօղա) մաղթանքով կը յայտնէին։ Ընաւազուծ կայսրն ալ սիրով և մարգարէութեամբ անոնց նայելու կը բարեհաճէր, որն որ կայսերական ողջունն նշան է։

Իշխեալ մզկիթի մէջ սովորական աղօթքը լրմնալէն ետքը կայսրն ու պաշտօնեայնները նոյն կարգաւ թօփ գաբուի պալատը դար

ձան, ուր բոլոր մեծ նախարարները և բարձր աստիճանի պաշտօնեայնները (Պոստափառ Սուլթանին իրենց ակնածական խոնարհուիլը ընելու արժանացան։

Կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի օրերը աւ մեծ տօնախմբութեան պատճառաւ Բարձրագոյն դուռը և կայսերական կառավարութեան զանազան տեսչութեանց պաշտօնատեղիները գոց էին և ամեն մարդ շնորհաւորական այցելութիւններու երթալով իրենց գլխավորներուն յարգանքնին մատուցին։ Երեկ ալ ըստ սովորութեան Բարձրագոյն դուռը և ուրիշ պաշտօնատեղիները ըստ սովորին աստիճանի պաշտօնեայնները բարձրագոյն աստիճանի եղածներուն շնորհաւորութեան պարտաւորութիւն կատարեցին, իւրաքանչիւր սենեկին իրենց գլխավորի առաջնորդութեամբ։ Աս հանդէսն ալ տեսնելու արժանի բան մըն էր։

Յարգոյ ընթերցողաց յայտնի է թէ անցեալները կայսերական հրովարտաւով մը ամենայն աստիճանի պաշտօնեայն (թէ անձնական և թէ պաշտօնական արժանաւորութեամբ) կամայ կերպիւ ձեռք բերած) պատուոյնը շանները ետ առնուեցան։ Ըմեն մարդ կրսպասէր թէ կայսերական կառավարութիւնը մէկ կերպ տնօրէնութիւն մը պիտի ընէ արժանաւոր ծառայները վարձատրելու համար։ Ընաւազուծ ինքնակալը իւր սովորական մարդասիրութեամբ բարեհաճեցաւ այս անգամ պատուոյ նշաններ շնորհելու Բարձրագոյն փոխարքային, Հէյս իւլ Սալամէ-Ֆէնտիլին, մեծ ծովայնային, թնդանօթաւոր զօրաց նախարարին, պատերազմային գործոց նախարարին, արդարութեան Բարձրագոյն ատենի նախագահին, արտաքին գործոց և ելեմոցի նախարարներուն, Իւլմէլի, Ընատօլուի, Հիւսայի, Ընատօլուի և Կոստանդնուպօլսոյ բանակաց և կայսերական պահպան զօրաց հրամանատարներուն և փոխարքայի խորհրդականին։ Այս Սուլթանը ըստ անձնական արժանաւորութեան համար շնորհուած նշանները նորաձեւ են. մէջտեղը պղնձագոյն կիտուած (մինէ) բոլորովեք արծաթի ճաճանչներով. կիտուածին վրայ ու

կի տառերով սափաթաթ (հաւատարմութիւն) շաբթի (փոյթ) հափթի (պատիւ) գրուած է, և ասոնց ալ մէջ տեղը արքունի նշանագիրը (թուրա) կայ։

Աս նշանները երեք տեսակ ըլլալով՝ առաջին հինգ հատը բարձրագոյն, հետեւեալ հինգ հատը երկրորդ և վերջին հինգ հատն ալ երրորդ կարգի են։ Առաջին կարգի Սուլթանին նշանը մէկ մեծ կուրծքի ձախ կողմը և մէկ պզտիկ վեղը կախուել է. երկրորդ կարգինը առաջինէն քիչ մը պզտիկ ու մէկը կրծոց աջ կողմն ու մէկալ վեղը պիտի կախուի. և երրորդ կարգինը միայն կուրծքի աջ կողմն համար է։

Պէշ օղլուի ոստիկանութիւնը, որ առ ժամանակ մի Սալիթ աղային յանձնուած էր, անցեալ շաբթու մէջ Նէսիպ փաշային յանձնուեցաւ։

Շաբաթ, որ Պայրաթի նախընթաց օրն էր, պատերազմի նախարար Սէհմէտ իւլ շափաշայի խնամքը (որն որ միանգամայն ոստիկանութեան գործոց տեսուչ է) բազմութիւն անձանց ազատութիւն շնորհուեցաւ, որոնք կամ փոքրիկ պարտուց և կամ չնչին յանցանոց համար բանտարկեալ էին։ Աս գլխութե գործը, որ վեհափառ Սուլթանին բարեխնամ կամացը համեմատ է, շատ գովութեան արժանի է, թող խեղճ ազատեցող արտասուալից շնորհակալութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳՂԱՍ. ԵՒ ՕՆՈՆ 5 յուլիսի։
Նախընթաց թերթով լինողիս խորհրդաւորանի գոցուելը համառօտիւ մը յիշեցնիք։ Թագուհւոյն գահաթօսութենէն քանի մը ուշադրութեան արժանի յօդուածներ այս տեղս կը համառօտեմք։

«Օրտեր և Պարոններ»
«Ինչհանուր քաղաքականութեան ակնաւորութիւններէ կըստիպուի մտփորական ժամանակէն առաջ ազատելու զձեզ ձեր օրէնսդրական պաշտօններէն»
«Խորհրդարանի գործերուն ձեր ցուցըցած եռանդն ու փոյթը կարողացուցին զիս, որ

ՄՕՆԹԻ ՔՐԻՍԹՕ

(Շարունակութիւն. տես թիւ 8 - 9 - 10 - 11 - 12 - 17 - 18 - 19)

Ոչ Մերսեդէս և ոչ Էմմա Ֆերմանին առ փոխը չէին տեսներ։ Այս խեղճ երիտասարդները ոչնչաւ երջանիկ էին, որ զերեք միայն կը տեսնէին և այն պայծառ երկիւնքը որ զերեք կ'օրհնէր։

Տանկար և Քատրուս իրենց հրամայաւոր անոնց ըսին. ետքը խոստով ձեռքը սերտ բարեկամութեամբ թօթուելով՝ Տանկար Ֆերմանին ու Քատրուս Տանթիս հօրը քովէն կերթային, որ հասարակաց ուշադրութեան կեդրոնն էր։

Այս ծերունին պողպատէ անկիւնաւոր (ֆասթիւալ) մեծ կոճակներով զարդարուած կերպասեայ գեղեցիկ զգեստ մը հագած էր, իր նիհար բայց զգալի ոտքերը վայելուչ կերակային խայտաւարութեամբ քաղաքէ գեղեցիկ գուլպաներուն մէջ, ձերմակ ու կոպոյտ ժապաւեններ կախուած էին իր եռանկիւնի գլխարկէն, վերջապէս գլխակոր փայտէ գաւազան մը ունէր ձեռքը։

Անոր քովէն, ինչպէս ըսինք, Քատրուս կ'երթար, որ փառաւոր հացիկներով մը յուսով Տանթիսի ընտանեաց հետ հաշտուած էր, և հազիւ մարին մէջ առջ իրիկուան պատու հաճ բաներուն վրայօք անորոշ յիշատակ մը կար, ինչպէս որ մարդ առաւօտուն արթնցած ժամանակը, կը յիշէ գիշերը տեսած երազը։

Տանկար Ֆերմանին մօտենալով, ճամբայ տրուած սիրաւորան աղէկ մը կը նայէր։ Ֆերման երկու ապաւնի ամուսիններուն ետեւէն կուգար, բոլորովն մոռցուած Մերսեդէսէն, որ երիտասարդական անձնասիրութեամբ և սիրով վառուած էր մօտէն զատ մէկը չէր տեսներ։

Ֆերմանի գոյնը նետեր էր, քիչ մը ետքը յանկարծ կար

մըլեցաւ, այնպէս որ փոփոխակի երբեմն կը կարմրէր ու երբեմն կը դեղնէր։ Անին ատեն դէպ ի Մարտիկա կը նայէր, ու ջղախն աստիճան մը իր անգամները կը սարսէր։ Ֆերման բանի մը կըստեմք, մէկ մեծ անցք մը կը գուշակէր։

Տանթիս պարզ հագուած էր, ծովային վաճառականութեան վերաբերեալ մէկը ըլլալով՝ հագած հանդերձ քիչ մը զինուորական միւսն և զգեստի կը նմանէր, և քիչ մըն ալ քաղաքական սովորական հագուստին։ Կերպարանքին զուարթութիւնը որ իր նշանմէն ուրախութեամբ և գեղեցկութեամբ կ'աւելնար՝ կատարեալ էր։

Մերսեդէս գեղեցիկ էր թխալոյն աչքերով և կարմրափայլ շրթունքներով, և համարձակ կը քաշէր, Քատրուսի աղջիկ մը գուցէ իր ուրախութիւնը կերպով մը ծածկելու ջանայ. բայց Մերսեդէս զուարթութեան էր և իր բոլորովեք երազները կը նայէր, թէ իր զուարթութիւնը և թէ իր նայուածքը յայտնապէս սա խօսքերը կ'իմացնէին. «Թէ որ բարեկամներս էր, ուր ասանցքէ ինծի հետ, քանզի ես արդարեւ շատ երջանիկ եմ»։

Երբոր նշանմէնն ու անոնց ընկերակիցները Բեդիւ մօտեցան, Պ. Մուէլ ինչու ու անոնց առաջը գնաց, և անոր հետ տեսչան նաւատիրներն ու զինուորները, որոնց նորագէտ էր իւր կողմէն Տանթիսի եղած խոստմունքը, թէ Լըբէր նաւապետին տեղը պիտի անցնէ։ Էմման երբոր տեսաւ անոր գալը, Մերսեդէսը Պ. Մուէլի բազկին յանձնեց, Վաճառականն ու երիտասարդ աղջիկը առջնուն ինկան, իրենց առաջ փայտաշէն սանդուխէն վեր ելլելով որ դէպ ի օնեակը կը տանէր, ուրտեղ ճաղ պատրաստուած էր։

Հայր իմ, ըսաց Մերսեդէս սեղանին մէջ տեղը կանգնելով, դուն ալ կողմն նստի, կ'աղայեմ. իսկ ձախ կողմն կուգէմ որ ինձ եղբայրութիւն ընողը նստի, և այս խօսքը այն պէս քաղցրութեամբ մը արտասանեց որ գալուն մը հարուածի պէս՝ Ֆերմանին օրտին խոր թափանցեց։ Անոր շրթունքը պարզուեցաւ, և իր տեղը երեսէն գարձեալ արիւնը քիչ

քիչ անեղնայն ըլլալով բոլորովն գեղեցաւ։

Աս միջոցս Տանթիս ալ նոյն վարպետութիւնը կը բանեցնէր. իր ալ կողմը Պ. Մուէլը նստեցուց, ու ձախ կողմը Տանկարը, ետքը իր ձեռքով նշան բուռ ամէն մէկուն որ ուզած տեղերնին նստին։

Արդէն պատրաստուած էին սեղանին վրայ տեսակ տեսակ կերակուրներ և ընտիր լեւեռներ ինչպէս էին երջանիկ (սուճուգ), խաչափառներ (լէնկէճ), խեցեմորթներ (ստաբոլ) ոտարկներ (ըստիւրիա) և այլն։

Ինչու այսպէս լուռ կեցիք եմք, ըսաւ ծերունին բաժակ մը տոպալունի (սարը ետքութի) պէս գեղնագոյն գինի խմելով, որն որ փանֆիլ անձամբ բերեր Մերսեդէսի առջևը դրեր էր։ Կարծես թէ ուրախութիւն ընելու համար ժողովուած չէիք։

Ե՛հ, ամուսին մը ամեն ատեն ուրախ չի կրնար ըլլալ, ըսաւ Քատրուս։

Բանը ան է, ըսաւ Տանթիս, որ ես այս վայրկեան մէջ չափազանց երջանութեան չեմ կրնար ուրախ ըլլալ։ Թէ որ դուն այս մտքը կը խօսիս, բարեկամ, իրաւունք ունիս։ Ուրախութիւնը երբեմն անսովոր աղեցնութիւն մը կ'ընէ, որոմունութեան պէս մարդը կը նեղէ։

Տանկար Ֆերմանը գիտեց, որուն գիւրգաղիւ բնութիւնը սրտին յուզումները մերթ կը ծածկէր և մերթ կը յայտնէր։

Ի՞նչ ունիս, ըսաւ, բանէ մը վախ ունիս, ընդ հակառակն ես կը կարծեմ թէ ամեն բան քու բաղձանացդ համաձայն կը քալէ։

Ես ալ ճիշդ աս բանէն կը վախնամ, ըսաւ Տանթիս, կարծեմ թէ մարդ ասանկ գիւրգաղեմ երջանիկ ըլլալու համար ծնած չէ։ Երջանութիւնը կը նմանի գիւրգաղեմ կղզեաց այն պալատներուն, որուն դռները վիշապներ կը պահեն։ Պէտք է պատերազմիլ զանի ձեռք ձգելու համար. ճշմարիտ կրտսմ որ ես ալ չեմ գիտեր թէ ինչ բանով արժանացայ Մր. սեւեռի այլը ըլլալու։

այս տարուան նիստերուն բաղդատաբար սա-
կաւառեւ ժամանակին մէջ, բազմաթիւ խիստ
հարկաւոր, և կը յուսամ, մեծապէս և միշտ
օգտուէտ կարգադրութիւններ հաստատու-
լու: 77

«Ամեն օտար տէրութիւններէն Մեզդիւ
համար ունեցած բարեկամական խորհուրդ-
ներնուն հաւատարմութիւնը ընդունած եմ, և հաս-
տատ յայտ ունիմ թէ Նշարայիւ գլխաւոր տե-
րութիւններուն մէջը բարեբաղդաբար գրա-
նուած բարեկամական յարաբերութիւնները
բաւական զօրութեամբ հաստատ մնալով՝
պիտի կարողանան, Վստուածային նախախա-
մուծեան օգնութեմբ, խաղաղութեմբ բարեկա-
նակար շարունակութիւնը ապահովելու երա-
շխարհիս: Իմ ուշադրութիւնս անդադար
այս մեծ նպատակին վրայ պիտի ըլլայ: . . . »

«Բարձրագոյն դրան և Նշարայիւ փաշա-
յին մէջը տեղի ունեցած վիճաբանութիւն-
ներուն խաղաղական վերջաւորութիւնը Վր-
եան երկիրներուն հանդարտութեանը ե-
րաշխաւորութիւն մըն է, միանգամայն և
քաջաւերութիւն մը առեւտրական յաջողա-
կութիւնը ծաւալելու: 78

«Ռանգուն բնակող հպատակներուս եղած
անիրաւութիւններուն և անարգանաց հա-
մար արդարութեամբ պահանջուած հատու-
ցումը Վայի թագաւորին կողմէն չորտուե-
լուն համար՝ յիշեալ իշխանին հետ բարե-
կամական յարաբերութիւնն ընդմիջեցան,
. . . : Հաւատարմ եմ
թէ ինձ հետ պիտի հաւանիք ծովային և
ցամաքային զօրաց վարմունքին, որոց քաջու-
թեամբ և զինուորական կրթութեմբ Ռանգուն
և Վարթապան քաղաքները առնուեցան, և
ինձ հետ պիտի յուսաք որ աս երեւելի յաջո-
ղութիւնէն ետքը շուտով և պատուաւոր կեր-
պիւ խաղաղութիւն պիտի ըլլայ: 79

«Հաճութեամբ հաստատեցի աղբային
պահպան զօրաց լաւագոյն կերպիւ կազմու-
ելնուն համար ձեր առաջարկած օրէնքը, և
այս սահմանադրական զօրութիւնը ներքին
պաշտպանութեան առարկայներու սահման-
ուած ըլլալով՝ գրացի տէրութիւններուն
կասկածի արդար իրաւունք չիտար, բայց օ-
տար կառավարութեանց հետ յարաբերու-
թիւններս յանկարծ փոխուելու ըլլան նէ,
իմ երկիրներուս ապահովութեանը և պաշա-
պանութեանը միշտ ձեռնադրու կրնայ ըլլալ: 80

«Վստիարայի մէջ նոր գտնուած ոսկւոյ
ընդարձակ հանքերը ընկերական վիճակները
յանկարծ փոխութեան, և ասոր անմիջապէս
ուշադրութիւն ընելու է 77:

«Վստիարայի խորհրդարանը շուտով լուծե-
լու գիտաւորութիւն ունիմ, և մեծ փափա-
քս ան է որ մեր ազատ սահմանադրութեմ
համեմատ անգամ ընտրելու իրաւունք ունե-
ցող զանազան ընկերակցութիւնները ածային
իմաստութեան աղբայութեամբ կարենան
անանկ պատգամաւորներ ընտրելու, որոնց
գիտութիւնը և հայրենասիրութիւնը օգնեն
ինձ իմ անդադար ջանքս մէջ՝ տէրութեանս
պատիւը պաշտպանելու: Երկրիս բողոքական
կարգադրութիւնները և անոնց բնական հե-
տեանքը եղբայրաբար և կրօնական ա-
զատութիւնը հաստատ պահելու, աղբային
կրթութիւնը ընդարձակելու և լաւացընելու,
ճարտարութիւնը, արհեստը և գիտութիւնը
քաջաւերելու և ծաւալելու, երկրիս բարո-
յական և ընկերական վիճակը բարձրացընե-
լու, և այս կերպիւ ժողովրդեանս երջանկու-
թիւնն ու բարեկեցութիւնը աւելցընելու: 78

«Խորհրդարանի նոր անդամոց ընտրութի-
նները սկսան: Ընտանի համար ընտրուելի
պատգամաւորներն են՝ օրտ Ղոն Ռոստի, Պա-
րոն Ռօթշիլտ, Սըր Ղէյմ Տիւրք և Սիւթթ
Սասթրման, որոց չորսն ալ կարելի է որ ընտ-
րուին: 79

«Խորհրդարանները օգոստոսի 20 ին կըր-
կին պիտի բացուին: 80

«Սթոքհոլմ քաղաքը մեծ կռիւ մը պա-
տեհեր է բողոքականաց և հռոմէականաց
մէջ, որուն պատճառը վերջիններուն փողոց-
ներու մէջ եկեղեցական թափօրիւ պտու-
տիլը արգիլող արքունի հրովարտակը եղած
պիտի ըլլայ: Վստիարայի հախաւակ հռո-
մէականները մեծ խաչերով թափօրի ելեր են
յիշեալ քաղաքին մէջ, ուր բազմաթիւ իւ-
րանոցիք մօտ քաղաքներէն հաւաքուելով՝
մասնակից եղեր են. և միւս բնակիչները
չը խառնուելով՝ անկարգութիւն մը չէ ելեր: 81

«Իսկ օր մը երեկոյեան ժաման Մեզդիւ
ցի մը իւրանոցացի մը հետ վիճաբանելու
սկսեր է գինետան մը մէջ, իւրանոցին կը
սնդէր թէ թափօրները պիտի շարունակեն
և Մեզդիւցին թէ պիտի դադարին. վիճա-
բանութեանէն ետքը կռիւ ու ծեծ ելլելով
Մեզդիւցին յաղթող գտնուեր, բայց իւ-
րանոցին վրէժխնդրութիւնը հետեւեալ ա-
ւուր ձգեր է: Իսկապէս նշանակեալ օրը իւ-
րանոցիք քանի մը Մեզդիւցացի վրայ յար-
ձակելով՝ կանոնաւոր պատերազմ բացուեր է,
և վիրաբուժի մը տան և բողոքականաց ե-
կեղեցւոյն պատուհանները կոտորեր են:
Իսկ քիչ մը ետքը Մեզդիւցիք ալ թուով
զօրանալով՝ իւրանոցացի բնակած բոլոր
տունները քանդեր ու կահ կարասիքը ցրտ
ու յան ըրեր են, և ասով չբաւականանալով՝
իւրանոցացի երկու աղօթատեղիները մտեր,

ամեն բան տակն ու վրայ դրեր, գիրքերը աւ-
րեր, սեղանը քանդեր և վերջը ամեն բան
կրակի տուեր են, յիշեալ աղօթատեղիներ-
ուն կից եկեղեցականաց մէկուն գրատունն
ու կոռասիքը մէկ տեղ: 82

«Բաղաբապետները զօրաց օգնութեամբ
անկարգութիւնները վերջացուցեր են. հա-
րիւր քսան յանցաւորք մեծագոյն մասամբ
Իւրանոցիք բանտարկուեցան ամէնքն ալ
ծանր կամ թեթեւ վիրաւորած: Վստիարայ
արդէն մեռեր է, և երկուքն ալ փախդի
մէջ են, մնացածներուն վերքերը փայտով և
կարասեայ կոտորանքով և աթուոց ոտքերով
եղած ըլլալով՝ անվնաս կը կարծուին: 83

«Բազմաթիւ սրահայանք փողոցները կը
հսկեն որ կրկին անկարգութիւն չըլլայ, որն
որ կերակրէն ետքը սեղանի վրայ մանանկոյ
համեմ զնելու կը նմանի: 84

«Օարմանալի է թէ բարեկարգ կառավա-
րութեան հպատակ լուսաւորեալ (կարծուած)՝
ժողովրդեան մը մէջ ինչպէս կրնան պատա-
հել կրօնական վեճեր ու անոնցմէ ետքը ա-
րիւնահեղ կռիւներ: 85

ԳԱՂԱԻԱ. Փարիզ 3 յուլիսի:
«Խախտելով թերթով յիշուած դաւա-
ցութեան վրայօք մանրամասն խոր զարկու-
թիւններ ըլլալու վրայ է: Վրդէն 32 անձինք
բռնուեր են, որոց եօթը կանայք և մէկ պղծ-
տիկ աղջիկ: Օանազան նորահար զէնքեր և
ապստամբական թուղթեր ձեռք անցեր են:
Վստիարայի իւրանոցիք Վարդիւր այժ-
մեան կառավարութիւնը կործանել և հասա-
րակապետութեան նախագահը սպաննել կե-
րելի է: 86

«Նախագահ իշխանը զօրապետի հագուե-
տով լիւիզ պալատէն թիւիլիթի պալատը դը-
նաց Փարիզ նոր եկած հինգ զօրագու նգերուն
պաշտօնեայները ընդունելու համար, որոնց
հետեւեալ աստեղաբանութիւնը ըրաւ: 87

«Պարսնայք
«Իանակիւն զանազան գուեղերը տեսնելով
որ Փարիզը պահպանութեան պաշտօնին մէջ
իրարու կը յաջորդեն, բաղդաւոր կըլլամ
տեսնելով որ ամենին ալ միեւնոյն զինուորա-
կան հրահանգաց ոգուով և միեւնոյն հայրե-
նասիրութեամբ զօրացած են: Վստիարայ
որ գտնուեցաք թէ Միլիթիէ և թէ ի Վաղ-
դիա, ձեր վաքքը հասարակաց շնորհակալու-
թեանը արժանի եղաւ, և զձեզ Փարիզ կան-
չելով՝ իմ հաճութեանս յատուկ ապացոյց
մը տալ ուզեցի: 77

«Վստիարայ բարձրացեալ կացութեան մէջ,
ինչպէս է իմս, հոգեբը բերկրանքէն աւելի են:
Վստիարայի անգադար աշխատանոց
և մտածութեանց մէջ ալ ճշմարիտ վարձատ-

«Այս, անոր պար ըլլալու ես, ըսաւ Քատրուս ծիծաղե-
լով. բայց տակաւին եղած չես, բարեկամ. փորձե անգամ մը
անոր պարութիւն ընել, և կը տեսնես թէ ինչպէս կ'ընդուն-
ուիս: 88

Միտնեալ կարմրեցաւ:
Ֆերնան իր աթուռին վրայ նստած սիրտը կը մաշէր, պղծ-
տիկ ձայն մը առնելուն կը սարսափէր, և ատեն ատեն իր
քրտինքը կը սրբէր որ մարդարտի պէս իր ձակտին վրայ կը
շարունակէ, կամ միջկայքը անձրի մը առաջին կաթիլներուն
պէս: 89

Յիշուի Քատրուս դրացի, ըսաց Տանթէս, այսպիսի փոքր
բանի մը մէջ զիս սուտ հանելը չարժէր, Սթոք է. Միտն-
եալ տակաւին իմ կինն չէ. . . : (Ժամացոյցը հանեց) Բայց
մէկ ու կէս ժամէն պիտի ըլլայ: 90

Աս խօսքին վրայ իր բաբանիւր որ դարմանման ձայնի
հանցին, բայց ի Տանթէսի հօրմէն, որուն բարձրօճայն խն-
դալով ակունքները կը տեսնուէին, որոնք գեւ գեղեցիկ էին:
Միտնեալ ժողովեցաւ ու ալ չի կարմրեցաւ: Ֆերնան կատաղած՝
ձեռքը իր դանակին վրայ դրաւ: 91

«Ինչ կըսես, մէկ ժամէն, հարցուց Տանթէսը գոյնը նետած,
ինչպէս կրնայ ըլլալ: 92

«Այո, բարեկամներ, պատասխանեց Տանթէս, շնորհա-
կալ եմ քեզի: Միտնեալ, որուն հօրմէն ետքը ամէնէն շատ պար-
տաւոր եմ աշխարհիս մէջ, որ ամէն գոգաւորութիւնները գիւ-
րացուց. հարմանեալ հրամանին առած ենք, և ժամը երկուս-
ու կէսին Մարտիկոյի քաղաքապետը Հոթէլ-տը - Վիլլը (Դա-
տաստանաբան) մեզ կըսպասէ: Ուստի որովհետեւ հիմա ժա-
մը մէկը բաւորապէս անցած է, կարծեմ թէ շատ չեմ սխալ-
միկ ժամ ու երեսուն վայրկեանէն ետքը Միտնեալը տիկին
Տանթէս պիտի անուանի ըսելու: 93

Ֆերնան աչքերը գոցեց, արտաւանդեղ կրակի պէս կա-
րէին, սեղանին կ'ընկնեցաւ, որպէս զի չի նուաղի, բայց որ-
շափ որ կը ջանար, չի կրցաւ իր գաղտնի հեծութիւնը բռնել:

որ բազմութեան ծիծաղին ու խնդկեցութեան ձայնին մէջ չի
լուսեցաւ: 94

«Վրդէն դորձ տեսնալ չէ մի աս, յի, ըսաւ Տանթէսի
հայրը Վիլլայ ատեն կարմրեցնել է մի քու կարծեօք: Երեկ
տուտու դալ, այսօր ժամը երեքին կարգուել: խոստովանե թէ
նաւաստիները շուտ գործ կը լծնցընեն: 95

«Բայց միւս օրէնքները, ըսաւ Տանթէսը վստի, դաշնադ-
րութիւնը ու գրութիւնը. . . : 96

«Դաշնադրութիւնը, ըսաւ Տանթէս ծիծաղելով, լծնցած
է. թէ Միտնեալ, և թէ ես քան մը չունինք: Հասարակաց
կանոնովը պիտի կարգուինք: Վիլլայ շատ չի տեսէ գրելու,
և վճարելու ալ սուղ պիտի չըլլայ: 97

Աս կատակին վրայ ուրախութեան և քաջութեան ձայ-
նի լուսեցան: 98

«Ուրեմն հարմարութեան ճաշ կարծանին, ըսաւ
Տանթէսը, առանց տարակուսի հարմանեալ ճաշն է: 99

«Այո, ըսաւ Տանթէս, կան մը չիս կորսնցընէր, հանգարտ
եղեր: Սուղ տուտու փարիկ կրթեմ, Հինգ օր պետք է հոն
երթալու, հինգ օր դառնալու, ու մէկ օր ալ ինձի յանձնը
ուսած պաշտօնը կատարելու: մարտի 12 ին ալ հոս դարձած
կըլլամ, ուստի մարտի 12 ին բուն հարմանեալ ճաշը պիտի
ըլլայ: 100

Երբոր նորէն ճաշ ըլլալու խօսքը եղաւ, ամենուն իրն
գութիւնը աւելցաւ, անոնի որ Տանթէսի հայրը որ ի սկզբան
ճաշին անոնց լուսնեմը վրայ կը զանգատէր, այս միջոցիս
ամենուն խօսակցելու ժամանակը ի դուր կը ջանար փեսացու-
ին և հարմանցին երջանկութեանը համար բարեմաղթութիւն
ներ ընելու: 101

Տանթէս իր հօրը միտքը հասկըցաւ և մէկ սիրալիր ժպի-
տով մը արտաստեց: 102

Միտնեալ սրահին մէջ ժամը նայեցաւ ու պղտիկ նշան մը
ըրաւ Էտմունին: 103

Մեզդիւն բողոքիքը՝ այն խնդանց ուրախութիւնը և այն

ազատութիւնը կար որ ստորին վիճակի մարդկանց մէջ ճաշե-
րուն վերջը կ'ըլլէր: Միտնեալ որ իրենց տեղէն զո՞ն չէին, սեղա-
նէն ելն ուրիշ ընկերներ գտնուելու գացեր էին: Վստիարայ
կրտսէր մէկէն խօսիլ, և մէկը իր խօսակցին պատասխան տա-
լու չէր հոգար, բայց միայն իր խորհուրդներուն մտադիր էր:
Ֆերնանի գեղնութիւնը կարծես թէ Տանթէսի պատրու-
ն վրայ փոխադրուէր էր, Իսկ Ֆերնանին վրայ կ'ընդանուէր
մնացած չէր, և հրաւրեց ըն մը մէջ գաւառապարտածի մը պէս
կերակար: 104

Վստիարայ առաջ ոտք ելեր ու սրահին մէկ կողմէն մէկալ կողմը
շուրջ կուգար աշխատելով որ չլսէ երգերն ու գաւառներուն
մէկ մէկը զարնուելու ձայնը: 105

«Բարտուս իրեն մտնեցաւ երբոր Տանթէսը որմէ հեռանալ
կը ձեռնարէր, սրահին մէկ անկիւնը հասաւ քովը: 106

«Յիշուի, ըսաւ Քատրուս, որ Տանթէսին քաղաքապետ
փայտեղքը, և մանաւանդ փանթիլը աղէկ գինին Տանթէսի
անակոնտէի բարեբաւորութեան իր սրտին մէջ մնացած բոլոր
ատերութեան բողոքները ոչնչացուցեր էին. յիշուի, Տանթէս
այնիւ տղայ մըն է. և երբոր դանի իր նշանածին քովը նստած
կը տեսնեմ, միտքս կըսնձ թէ շատ դէշ ըրիք անոր համար
երեկ գաղտնի դաշնակցութիւն ընելիդ: 107

«Բայց, ըսաւ Տանթէսը, կը տեսնես որ բանը հետեւութիւ
չունեցաւ, այս խեղճ Պ. Ֆերնանը այնքան տալիս ու վրայ ե-
ղած էր, որ ի սկզբան ինձի տրամաթիւ տուաւ, բայց երբոր
իր որոշմունքը հասաւ, անմակ որ իր նախանձորին հարսան-
եացը պատիւ ընող առաջին երեստապարտը եղաւ, ալ ըսելը չի
մնաց: 108

«Բարտուս Ֆերնանին նայեցաւ, որ նախանձէն գոյնը նե-
տած էր: 109

Ֆերնանին ըրած դէպ շատ մեծ է, շարունակեց Տանթէսը,
որովհետեւ գեղեցիկ աղջիկէ մը կը հրաժարի: Միտնեալ, ինչպէս
երջանիկ է իմ ապաւանի նաւապետս, երանք թէ անուան Տան-
թէս ըլլար միայն տանտերիւ ժամ: 110

Բաւեալը հեղեղաւ ինքնիւրով

բուժիչները կը գտնուին . առաջինը պարտաւորութեան կտարարէն է . անկէ ետքը ամենէն քաղձը եղածներէն մէկն է (ինձ համար) մեր բանակին պէս բանակի մը հրամայել, աւոր անցած, այժմեան և ապագային հոգը տանիլ, անոր պիտոյից և օգտիցը յարմարիլ, և վերջապէս գիտնալ որ վտանգի օրը անոր աղբու գործակցութեանը կարելի է միշտ ապաւինիլ, ինչու որ անոր շարժառիթը պատուէն է ։

« Հաւատարմ եղբ, պարոնայք, որ ձեր Փարիզ մնացած ժամանակը ուրախութեամբ ամեն առիթները ի գործ պիտի գնեմ՝ ղէնդ տեսներու և իմ սիրտը խնամոցս նշաններ տալու ։ »

— Ի օնտոնի «էյն Կի» լրագիրը յունիս 18 ին Հոռովմէն գրուած նամակէ մը առնելով՝ կրտէ թէ Գաղղիոյ գեապան Սօսիէօ Տը Լէյնը վաղեմի ծառան իւր տէրը թուաւորելու անցաւ . փորձ մը ըրեր է կաթով խահլէին մէջ մկնդեղ խառնելով ։

ԱՒՍԴՐԻԱ : Վ ինչնա 11 յունիս : Վ Եհափաւ կայսրը երէկ կէս դիշերէն երկու ժամ անցած յանկարծ Վ ինչնա եկաւ . նոյն օրը առաւուսնց Հիօնպուռնի պալատը իւր ծնողքին և Սաքսոնիոյ թագուհւոյն (որ կայսրը մօրաքոյրն է և այս օրերս Վ ինչնա կը գտնուի) այցելութիւն ընելու գնաց ։ Վ Ես օրէն ետքը պաշտօնակցներուն և տէրու թեան խորհրդակցներուն հետ խօսակցելէն և խորհուրդ ընելէն ետեւ, նոյն օրը երեկոյն զարձեալ Փէշթ գնաց ։

— Լուդրիկ մէջ կտաւէ գործուածները աւելի ևս ազնուացնելու ջանքին օգնելով համար կայսրը վոյ (բէթէն) և կանեփի (բէն տիր) մշակութեան կեդրոնական ընկերութիւն մէջ մտաւ, 40 բաժին գրուելով որ 20-000 ֆիօրին կրնէ ։

ՍԱՌՏԵՆԻԱ : Թուրին 4 յունիս : Պատգամաւորաց խորհրդարանը յունիսի 26 ին սկսաւ քննել ամուսնութեան վերաբերեալ նոր օրինակներ, որուն վրայօք յառաջագոյն գրեցինք ։ Բաժնայից կուսակցութիւնը չափազանց յամառութեամբ դէմ խօսեցաւ, որպէս թէ Լիկեղեցւոյն իրաւանցը հակառակ ըլլայ . միւս կողմն ալ նմանապէս ծուռ աչքով կը նայէր նոյն օրէնքին, որ ան բաւական կը կարծէ տէրութեան իրաւունքը պարզ կերպիւ հաստատուելու ։ Ուստի հաւաքաւորութիւնը շատ աշխույժ և կռաւ ։ Վ Երբ ջապէս առաջարկուած օրէնքին ամեն յօդուածները բոլորէից առաւելութեամբ ընդունուեցան ։

ԱՄԵՐԻԿԱ : Նիւ Եօք 19 յունիս : Սիացեալ նահանգաց հասարակապետութիւն կուսակցութեան կողմէն ընտրուելի նախագահութեան հետամուտը դեռ չը նշանակուեցաւ . բայց առ հասարակ կը կարծուի

թէ Սքոթ զօրապետը պիտի ընտրուի ։ Մէսոյս 17 ին Վալթիմօր եղած ժողովին մէջ յիշեալ զօրապետը 134 քուէ, Սիւթթ Դիւմօրը 128 քուէ և Սիւթթ Ուէպթըրը 30 քուէ ստացեր են ։

ՅՈՒՆԱՍՏԱՆ : Սիւրպէն ամսոյս 14 ին կը գրեն ։

« Սօտերս Փրէմէզա կրտստուն Վերիկա յի Սանհաշիմօ անուն ֆրէմօն, որ կուսականընուպօլիս գնաց, անկեց Սիացեալ Նա հանգաց գետալան Սիւթթ Սիւթթ Կառնելով ։ Յունաստան բերելու համար, որոյ պաշտօնին է Հելլենական կառավարութեան հաստատում պահանջել, ամերիկայի հիւպատոսին Վիթնիքի մէջ եղած անարգանայը համար ։ »

« Սիւթթօֆօրօք քահանայն իւր եղբայրաւ կիցներէն մէկուն նենդութեանը շնորհօք Սիւթթի մէջ ձեռք անցաւ և օրն շագնաւով Փաթրաս տարուեցաւ ուր դատաւորն պիտի տեսնուի ։ »

— Լիթնիքի օստրալիօթի լրագրին մէջ կը կարգաւք ։

« Յունաստանի բոլոր երկիրները գնձոյ կամ խաղողիկի (քիշիշ) սրժեր տնկուած այգիներուն մէջ արտաքոյ կարգի տարափոխիկ տխուր մը կը տիրէ ։ Աստուր որ մինչև հիմա Յունաստանի մէջ անծանօթ էր, խաղողիկի ողկոյցները մածուցիկ նիւթով մը կը պատէ, մոխրոյ գոյն կուտայ և տան օրուան մէջ չորցնելով հատերը կը թափէ և շատ անգամ ողկոյցն ալ կը ձգէ ։ Վ Երբն ծանուցական լուրերուն նայելով՝ աստուր շատ տեղ մէկալ այգիներուն ալ կը փնտէ, և քանի մը կողմեր ալ ծառերը անգամ անկէ ազատ չեն ։ »

« Սիւթթ հիմայ եղած ճիշդ հաշիւներէն կ'երևի որ գնձոյ հունձքերուն երէք մասին երկուքը փճանալու վտանգ կայ ։ Շատ տեղ ալ ամենը կորսուած է ։ »

« Երբ տունկերը հինգերէն պակաս փնտուեր են այս տխուրն ։ Կառաւարութիւնը իրաւամբ վախճալով աստուր անհնկալ դժբաղդուն ծանր հետեւանքէն, ամեն միջոցները ի գործ դրաւ աստուր անմիջապէս բնակելու և եթէ կարելի է զանիկայ տկարացնելու հնարքը գործնելու և անոր տարածմանը արգելք դնելով՝ երկրագործներուն և հողի տէրերուն օգնութեան հասնելու համար ։ Երկրագործութիւն արհեստին մէջ հմուտ անձինք աստուր աստուր անգին զոյգուեցան ։ »

« Իրաւ է որ աստուր օրերս աստուր քիշ մը գաղթածի պէս եղաւ, բայց վերջացաւ և աւելի մեծ փնտներ ըլլալու չէ ըսելու չեմք կրնար ։ »

« Գնձոյ հունձքերուն կորուստէն յառաջ գալու երկրիս փնտը շատ մեծ պիտի ըլլայ, երբոր հաշուենք թէ աս բերքին բոլորն ալ օտար երկիրներ կը ղրկուին և տարեկան վեց կամ եօթն միլիօն ֆրանք (50 կամ

60 հազար քսակ Օսմանեան դահեկան) կը բերէ ։ »

ԱՋԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կեսարիայէն մեր յարգոյ թղթակիցը յունիսի 26 ին կը գրէ ։

« Կեսարիոյ միաբանութիւնը որով և աղբալին գործոց տրամադրութիւնը խիստ տակն ի վերայ է . երկու գաղղիոյ կայ քաղաքին մէջ, երկուքը ստակ մը չարժէր, մեծ մեծ շէնքեր, բայց մէկը աղբին ստակին որ զանոնք շէնքեր են . չկայ երկու միաբան հոգի որ ասոր կոգ քանիք նայինք ըսեն . իրարու հետ անձնական վէճեր ունին՝ աղբային գործերն, աղբային հաստատութիւններն իրենց գործիք ըրած՝ կաշխատին մինչև մեծ մեծ պարտքերու տակ ձգելով, վերջապէս անոնց կործանմանը պատճառ ըլլան . ամենէն աղբային գործոց վոյթ չկայ . Երտուած վերջը բարի ընէ, աղբային տոց տուն մը տայ որ այս խռովութեանց ինչ պէս կարենալ աւարտ մը տրուելուն խելքերնին հասցունեն զաղբը մեղքընալով . . . »

« Թաւառու հոյակապ Վարդապարիկեան վարժարանը դայի, շատ ուրախացայ տղոց յառաջադիմութեանը վրայ՝ անձամբ հարցաքննին ըլլալով անոնց զանազան ուսմանցը մէջ . և յատուկ շնորհակալութիւն ու բարեմաղթութիւն ժողով մատուցի վարժարանին հիմնադիր և խնամածու Վարդապարիկեան ազգասէր աղայից ։ »

« Կոնստէն և Սոնձուսուրի գաղղիոյ ըստ արժանայն աղէկ դուռ . ասոնց վրայ ուրիշ անգամ մանրամասն տեղեկութիւններ ունիմ գրել »

— Ըրշալոյս Ըրարատեանի 419 երորդ թերթէն հետեւեալ քանի մը տողերը կը հաճառուենք Ըրբացուց և Վոյթժցուց մէջ եղած վէճերուն վրայօք գրուած յօդուածէ մը ։

« . . . Երկրայութիւն չունիմք թէ հոռ մեղաւան . հայ ժողովրդեան խոհեմ, լուսաւորեալ և պարկեշտ մասը, որ խիստ մեծաբոյն և զօրաւոր մասն է, վերջին ճգամը պիտի աշխատին իրենց բաղմբարտ հոգեւոր հայրերը, Վ Ենեւոյ միսթարեան միաբանները կրտսէր պաշտպանելու . քանզի եթէ անոնց հակառակորդները յաղթօլ գտնուին այս գէպքին մէջ, եթէ անոնց հակառակորդաց սկզբունքը ընդունուելու և ի գործ դրուելու ըլլայ, մեղք, շատ մեղք ըլլայ պիտի հըռոմեղաւան հայ ժողովրդեան և հետեւաբար ընդհանուր աղբին . քանզի հայերէն խօսիլը սակաւ առ սակաւ բողբոյլին պիտի մոռցուի հոռմեղաւան Հայոց մէջ . լատինական ծէսերը պիտի յաջորդեն հայկական ծիսից, և հայութիւնը ու աղբութիւնը (մէջբնուեն) ընթուելով, ոմանք պիտի ըսեն՝ ինչպէս հիմա ևս կրնան թէ Լաթիկի եմք, Հայ չեմք . ոմանք թէ Լաթիկի եմք, Հայ չեմք . և ուրիշները թէ Կալաթիոյ Վրաթիկի, Հայ չեմք . մեք ուշադրուել ։ »

1 Ոմանք ալ այնչափ կուրացեալ են նախադաշնամբ,

Հոռմեղաւան Հայոց մը վէճալիք ։
Ինչհամար պիտուի ։
« Հոռմեղաւան Հայը անանկ սեպհական ժողովրդեան մը անգամ է, որուն աղբուր բացարձակապէս կրծքին վրայ հաստատուէ . և թէպէտ այս անձը կրծքանիւրէ և աղբաւ սիրուէ դադափաներուն տարբեր ըլլալը աղէկ կը հասկնայ, բայց և այնոյ անիմանալի խճի խայթէ մը չարքիւղած չկրնար երբեք ազգը սիրել, առանց կրծքը վերաւորելու . կամ կրծքը սիրել, առանց աղբը պիտարաւ կելու ։ Այս սահմանէս կը հետեւի, որ յիշեալ անձին կենսը մտաւորական խորհրդադաժուութեանց յաղմուներ մի է ։ Առաջին վիճակի ջանկարու բնական եռանդը իւր սիրտը կը բոցակիզէ, իւր առաջը բնաւորութիւնը ղնիքը կը գրգռէ և թեկերը բաց կարծես թէ պտորաստ է իր աղբալից եղբայրը գրկելու . բայց աչացը առաքաստէն իր եղբայրը իրեն օտար կ'երևայ, նման երկնոտ

մարդու մը, որուն գիշեր ատեն իւր պարտեղին թուփերը տոկալի ճիւղերի երկուն ։
« Հոռմեղաւան Հայը կարծես թէ բունի պարտաւորեալ է մոռնալ, թէ յետ սիրայ որ առ Երտուած՝ ընկերը սիրելն է առաջին պատուիրանը . որովհետեւ իրեն կը քարոզեն թէ, իւր հաւատակիցը ընկեր անուանելը քրեական յանցանք է ։ Իր ուշիմութեամբ այս սոսկալի վճիռը կը բաղդատէ անային և բնական օրինաց հետ, աղէկ կիմանայ որ մարդ պարտաւոր է նախ իւր ծնողքը՝ ապա ազգը՝ ապա օտարը սիրել, բայց նոյն հետացն միտքը կ'ընայ Հայ անունը և իբրեւ յաւատարմ ձեռքը ձակարդ դրած գլուխը վար կը ձգէ ։
« Այս սէրը որ հեթանոսութե մէջ պախալակելի քրիստոնէութե մէջ քրեական մեղք և լուսաւորեալ դարուս մէջ քաղաքական յանցանք սեպուած է, այն սէրը միայն ներուած է մեր հոռմեղաւան եղբորը, այսինքն Կալաթիոյ Վրաթիկի . և այն ոչ բացարձակ այլ սահմա

նաւոր . քանզի պարտաւորեալ է սիրել ոչ թէ իւր կողմակիցները, այլ կամայ և ակամայ սիրել իւր հակառակորդները՝ եթէ կուզէ իրեն իրեն հասնիլ ։ Կը քարոզեն իրեն որ յաւիտեական երանութե ժամանելու համար . ոչ միայն պէտք է եր աղբին անունը հեքքել և ուրանալ, ոչ միայն իւր հաւատակիցը ընկեր չանուանել, այլ պիտի առաջ իւր մտաց բնական լոյսը շնորհյանել և կոյր հնազանդութե օրինաց հպատակիլ ։
« Ենթադրենք թէ իւր առաւորին խաղաղութե համար այս ծանր լուծը կրելու յօժաւրի . բայց միայն անհակառակելի իրաւամբ պահանջէ որ իւր քաղաքական իրաւանցը պաշտպան մը գտնէ ունենայ ։ Այս դարձեալ անլուծանելի խնդիր մի է, որովհետեւ ինչպէս ըսինք իւր կարծեցեալ աղբութիւնը յատկապէս կրծքի վրայ հաստատուելով, քանի որ կրծքական անօրնեութե մէջ կարծիքները հակառակ են, բնականապէս կը հետեւի որ

Թիւն չեմք ընել անոնց՝ լադիւն էմ, Կախիլի էմ
կամ Գալաթիոյ Պրահի էմ, ըսենուն . քանզի
այս խօսքերը ինչ արժէք ունենալը ամեն
մարդ գիտէ . բայց մեծապէս կը ցաւիմք որ
իրենց հայութիւնը կուրանան 1, Հայ լեմ
կըսեն և հայր-խորհրդանշելով իրենց պատի-
ւըն ալ, իրենց համարումն ալ կը կորսնցու-
նեն ոչ միայն նոյն իսկ ճշմարիտ ֆրանկաց
առջև, այլ բուն ընդհանուր Հայոց ազգին
առջև և ա՛յ :

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

— Ըրդումանեան Սիբայէլ աղան ընկե-
րակցութեամբ իւր ազնիւ գերդաստանին ե-
րեքաբլի օր մայրաքաղաքէս մեկնեցաւ Իզ-
միր երթալու, ինչպէս որ յառաջ ալ ծանու-
ցած էինք : Սիբայէլ աղային հետ գնացնաւ
իւր քեռորդի ուսումնադէտ () հան աղան
Վահանեան, որուն նոր յօրինած քիմիակա-
նութեան պատուական գրքին տպագրութիւն
արդէն սկսած է :

— Պրուսայու երեւելի հայազգիներէն խա-
պիճեան Սատթէոս աղայն այսօր և Վրի-
գոր աղայն անցեալ հինգշաբթի Կոստանդը-
նուպօլիս եկան :

— Հաբաթ օր հայ քահանայ մի Իւսկիւ-
տար իւր տան մէջ ինքզինքը մեռուցեր է ա-
տորճանակով մը : Երեւալ քահանայն բաւա-
կան հարստութիւն և յարգ ունենալով և պար-
կէշտ ընտանեաց ալ տէր ըլլալով՝ ասանկ աղե-
տալի կերպիւ կեանքը վերջացնելուն, կը
կարծուի թէ անշուշտ խելքը ցնորած պիտի
ըլլայ աս մեղքը գործած ատենը :

— Իզմիր տասնեօթի տարեկան յոյն աղ-
ջիկ մը իւր ծառայած տանը վերի դստիկոնի
պատուահանէն զինքը փողոց նետելով՝ անձ-
նասպան եղեր է : Կըսեն թէ երիտասարդի
մը սիրահարած և ասոր համար մօրմէն յան-
գիմանութիւն լսած ըլլալով՝ յուսահատու-
եալ կամ խելագարութեան զոհ եղեր է :

— Հաբաթ օր ժամը ութն ու կէսին մեծ
կրակ մը ելաւ Քասրմ փաշա խաղախորդաց
գործարանէն (Թապաֆահան) : Հիւսիսային
հողմը սաստիկ փչելով՝ մեծ փնամներ հասցը-
նելու վրայ էր . բայց ամեն կողմէն մանա-
ւանդ արքունի նաւարանէն օգնութիւններ

այնչափ հակակրօնութիւն (անթիւիաթիս) ունին հայ անուան
գէտ, որ հայ լեմք ըսելու համար որո՞՞քի խախտի էմ կըսեն :

1 Չեմք կրնար խելք հասցնել սա բանին թէ Պապական
հայերուն Գօլֆօնքը ըստած մասերը ինչպէս կրնան հայու-
թիւնը կամայն է իրենց առաջին ազգութիւնը ուրանալ, ա-
ռանց յառաջագոյն ուրիշ կամ ըստագոյն (եթէ կայ) ազգի մը
մէջ խառնուելու, որ գոնէ հայ լեմք ըսած ժամանակին այս
ինչ կամայն ինչ ազգէ եմք ըսելու կարողանան : Ըստ մեր
կարծեաց իւր ազգը ուրացողը իւր ծնողքը ուրացողէն տար-
բեր պատիւ չը կրնար ունենալ, և ինչպէս որ առանց ծնողաց
մարդ չըլլալ՝ անմիջապէս առանց ազգի մը վերաբերելու ոչ մէկ
ժողովուրդ մը կրնայ գոնուիլ աշխարհին մէջ :

2 Կուղիքը հետեւեալ չորս հինգ տողն ալ օրինակելու . բայց
ըստ մեր կարծեաց նոյն տողերը շատ ընդհանուր կերպիւ գը-
րուած ըլլալուն համար և ազգիս այժմեան վիճակին նայելով՝
չըհամարձակեցոմք, մանաւանդ որ սէր և միաբանութիւն ըս-
տած բարիքը երբեք չեն անտեսած այն ժողովուրդներուն
մէջ, որոնք տարբեր կրօնքներով երարմէ բաժնուած ըլլալու
գործադրութիւնը ունին :

Քաղաքական իրաւանց միութիւն չի կրնար
ըլլալ . ուստի հռովմէական Հայը չունի բա-
ցարձակ իշխան մը իրեն դատաւոր, չունի օրէնք
իրաւանց պաշտպան, ժողով մը՝ օրինաց տե-
ղապահ : որով և այս մասանց մէջ բարձրա-
գոյն իշխանութեան կողմանէ իրեն տրուած ար-
տօնութիւնները բոլորովին անգործադրելի
են :

« Գուցէ և այս վիճակէն դժգոհ չէր ըլ-
լար հռովմէական Հայը, թէ իւր ընտանիքը
իրեն կարծեաց համամիտ ըլլային . ընդհակա-
ռակն շատ անգամ կը պատահի որ, կամ կինը,
կամ ծնողքը, կամ ազգական մը, կամ գրացին
կամ ամենքը մէկ տեղ իրեն բարի յօժարու-
թեանցը դէմ կըդնին : Կը համբերէ խեղճը .
բայց իւր համբերութիւնն ալ ծանակի նիւթ
կըլլայ : Վերջապէս քրտամբ վաստակած հա-
ցը անհանգիստ ուստէն զայրացած՝ կը գո-
չէ . « Ես, ես Հայ եմ, կրօնով ինչ ԸԼԼԵՄԻ ԸԼԵ
լա՛մ, ես Հայ եմ : Ես ատենը կըբողոքեն հակա-

հասնելով՝ առջևը առնուեցաւ . այսու ամե-
նայնիւ մէկ ու կէս ժամու մէջ 22 տուն, 5
խան, 12 աղօրիք և 42 խանութ հոյ ճարակ
եղան : Թեպէտ բաւական ծանր է աս կու-
րուստը, բայց ասկէ մեծ չըլլալուն և Գասրմ
փաշայի ազատութիւնը մեծապէս օգնեց պա-
տերազմի և ծովային զօրաց նախարարներուն
ներկայութիւնը, որ շատ քաջաբերութիւն
տուաւ ջրհան բանեցընողներուն ջուր կրող-
ներուն և ուրիշ գործաւորներուն :

— Նոյն գիշերը Լգասարայ ալ քանի մը
տուններ այրուեցան : Կիրակի օր ալ Փարմազ-
գարու հրկիզութիւն մը պատահեցաւ, բայց
շուտով շնորհեցաւ : Նոյնը եղաւ Լգասարայ
երկուշաբթի առաւօտուն :

— Նոյն ալ հինգշաբթի լուսնալու գիշեր
շատ անկարգութիւն պատահեր են Պէյ օղլու՝
ժամը երկուքին հրացանի մը ձայն առնուելու
է Լմին ճամփի ըստած Թաղին կողմէն : Ու-
տիկանութեան գործակալները իսկոյն հոն վա-
զեր տեսեր են որ վեց չարագործներ իրարու
հետ կը կուռէին՝ ձեռքերնին դանակներ և
ատրճանակներ ունենալով : Օտոնք ձեռք
ձգել ուղեր են, բայց եղեռնագործները դէմ
դնելով՝ պահապանաց գլխաւորին ձախ թելը
և ուրիշ մէկու մը ձախ կողը վիրաւորե-
ր են : Վիրաւորողը բռնուելու բանտը տարուել
է, բայց մեկալները փախեր են, և անշուշտ
ուշ կամ շուտ ձեռք պիտի անցնին : Վիրա-
ւորեցող վիճակը բարեբաղդաբար վտանգա-
ւոր չէ . և կը յուսացուի թէ շուտով կա-
ռողջանան :

— Նոյն օրը կէս գիշերէն երեք ժամ ան-
ցած Պէյ օղլու Փանկալոյի կողմերը Լչմա
տաղ ըստած տեղը երկու սպառազինեալ
մարդ խանութի մը առջև կանգնած էին : Ու-
տիկանութեան պահապանը զանոնք տեսնե-
լով՝ կը մօտենայ և կը հարցնէ թէ աս ա-
տենս առանց լապտերի և սպառազինեալ ինչ
կը խնդրեն, և իբր պատասխան՝ անհակ ու-
սոյն վրայ դանակի հարուած մը ընդունեց :

Օտոնք յունաց հպատակ է : Պահա-
պանը առանց վախճալու, ուժով մը եղեռնա-
գործը կը գրկէ, և բարձրաձայն կանչելով իր
պաշտօնակցաց խմաց կուտայ, որոնք շուտ մը
վրայ հասնելով՝ երկու չարագործներն ալ կը
բռնեն ու բանտ կը տանին : Ուտիկանութե-
ան գործակալին վեքը վտանգաւոր չէ :

— Բարձրագոյն դրան մօտ Գաղղիոյ գեւ-
պան Լալալէթի Սարքէղը ամսոյս 8 ին փա-
րիզէն մեկնեցաւ Թուրքի երթալու, ուսկից
Հարլմանը մեծ պատերազմական շոգենաւով
Կոստանդնուպօլիս պիտի գայ, ուր քանի մը
օրէն կըսպասուի :

— Նախընթաց թերթով Լալալէթը լրագ-
րէն առնելով՝ յօդուած մը հրատարակեցինք
հռովմէականաց մէջ եղած խռովութեանց
վրայօք : Ինչպէս որ կը յուսայինք նոյն լրա-
գիրը այս շաբաթ հետեւեալ քանի մը տողե-
րով յիշեալ յօդուածին դէմ գրուած բողո-
քը կը գրէ, զոր այս տեղս կ'օրինակեմք :
« Կոստանդնուպօլիսէն յուլիսի 2 թուա-

կանով եկած մեր վերջին թղթակցութեան
մէջ պզտիկ յօդուած մը կար մայրաքաղաքին
Հայ-Կաթոլիկ հասարակութիւնը բաժնող
ցաւալի վեճերուն վրայօք : Ես նիւթիս վրայ
նամակ մը ստացանք մեծայարգ անձէ մը, որ
տուած բացատրութիւններովը բոլոր յան-
ցանքը Սոսիսեօր Հասունին վրայ կը ձգէ :
Սոսիսեօր հարգի մանելու վրայ էր, կըսէ
նամակին հեղինակը, մտքերը հանգարտելու
վրայ էին, երբոր 300 երեսէ բաղկացեալ
գիրք մը (որուն հանգամանքը շատ խստու-
րէր ցուցնէ) եկաւ ամեն բան տարակուսա-
նաց մէջ ձգեց և կրակը կրկին վառեց : Ես
կարելի է այն գիրքը կարդալ ու չըրոտմիլ
և անոնք որոնց կը դպչի, չեն ուղեր ամե-
նեին իրենց դէմ գրուած ամբաստանութեց
տակը մնալ : Ուստի ազգը պէտք չունէր որ
միութարեաններէն գրգռուէր անկէց հատու-
ցում պահանջելու : Եսոր համար Բարձրա-
գոյն դրան իմաստութեանը դիմեց, և եկե-
ղեցական խնդրոց վերաբերեալ մասը Հռով-
մայ գահին որոշմանը կը յանձնէ : Կամակին
հեղինակը կը հաստատէ մեզ թէ ազգին մե-
ծագոյն մասը, բազմաթիւ երեւելի անձանց
և քահանայից հետ, Սոսիսեօր Հասունին
դէմ է : Ես գործոյս վրայ խօսելու արդէն
սկսած ըլլալով՝ մեր անկողմնապահութիւնը
կը պարտաւորէ զմեզ այս բողոքը ընդունե-
լու : »

— Մայրաքաղաքիս Լալալէթ լրագրին մէջ
կը կարդամք « Կաթոլիկայի Հիւսիսային կողմը
երեւելի քաղաքի մը մէջ՝ կանայք ոտք են ե-
լեր ու քաղաքական գործոց մէջ խառնուե-
լու իրաւունք պահանջելու մտքը ժողով մը
ըրեր են, ուր տեղ ամեն կողմերէն կնիկները
գալով խորհրդէն են որ ամեն նահանգներուն
կողմէն մէյմէկ կնիկ փոխանորդ զրկուի ազգա-
յին խորհրդարանը . ասոնց նախագահը եր-
կայնահասակ և 72 կամ 73 օրս ծանուրք և
էրիկ մարդու ձայն ունեցող կին մըն է եղեր :
Ես ժողովքին մէջ ներկայ գտնուող քաղաքա-
գէտ կանայքը երիկ մարդու զգեստ հագե-
ր են, և որոշուել որ այսուհետեւ քաղաքական
գործոց խառնուին, իրենց արանցը գերի
չըլլան և անդադար որդեհնութեան չաշխա-
տին :

— Նոյն լրագրը կը պատմէ թէ Կաթոլի-
կոյն Պօթմալի գիւղը կին մը եռամսեայ
երեխան գրկելու առած արտը գնացեր է ա-
րը տեսնելու, որ երկրագործութիւն կընէր :
Ես տեղ երեխան ծառի մը տակ կը գնէ ու-
կըկանը քովը կերթայ : Ի՞՞՞՞քաղաքաբար նոյն
կղզւոյն մէջ մարտիկներու սաստիկ բազմութիւն
ըլլալով՝ խեղճ երեխային վրան կը թափին ու
բոլորովին կուտեն զայն : Կաթաղդ մայրը
գարձած ատենը միայն ոսկերքը կը գտնէ :

— Լյոնի մօտ Տէնիլի գիւղաքաղաքին
շուկան բողոքովին այրեր ու 8 կամ 9 հարիւր
հազար դահեկանի փնաս եղեր է :

— Շուտուէն կը գրեն թէ մօտերս սատիկ
կարկուտ իջեր է, որուն հատերուն մէջ մին
չե 125 գրամակշիռ ունեցող գտնուել է :

ՏԵԱՐԲ ԼՐԱԳՐՈՅՍ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ = ՍԱՀԱԿ ԱՊՐՈԵԱՆ

« Լալալէթ լրագրի մասնաւոր Լալալէթի Լրագրի »

Կ. ՊՕԼԻՍ Ի ՏՊԱՐԱՆԻ ԶՕՀԱՆՆՈՒ ՄԻԻԿԵՏԻՍԵԱՆ

ուսկողմերը ուրիշ խախտի չէ ու
կուռ : Ես խռովայող վիճակին մէջ կըբնա-
կի հռովմէական խեղճ Հայը, իբրեւ անձ մը՝ որ
վիշեղէն անկողնի մը վրայ պառկի ու խաչ-
թերուն ցաւը նուազ զգալու համար՝ մէկ
կողմէն մէկալ կողմը դառնայ ու վերքերը ա-
ռաւելու . իբրեւ մարդ մը որ իր հայրենիքը
աչօք տեսնայ և ըսէ, ես 'ի սէր Լստուծոյ
հայրենեացս սէրը զանց կառնեմ, և իրեն
պատասխանեն . « այդ բառախաբ, սիրողիկն ալ
նոյնն է : վերջապէս իբրեւ մէկը որ խաբիւրու-
տան մը մէջ բնակի ըսելով թէ . « Ես հոս լա-
լալիսեմ » . քանի որ ազգակից դրացին իրեն կը-
սէ . « Եղբայր տունդ կործանման վրայ է, զիս
քեզի 'ի զուր բամբասեցին որ աղօթիցդ
թշնամի ըլլամ, իմ տունս քուկդ է, ինչպէս
իւրիս այնպէս աղօթի . միայն կեանքդ վտանգա-
ւոր տան մէջ մի անցնէր » — Չյտեմ
ինչ անհիմն կասկածներ իւր ընթացիցը տը-
գելը կըլլան, խորհրդածութեամբ օրերը

կանցնէ և տունը չի կործանած՝ կենացը
վախճանին կը մօտենայ : Կըբարեմաղթէ ան
ատենը լաւագոյն օրեր իւր որդւոցը և յետ-
նոց և իրեն վերջին խօսքերը կըլլան Հռովմէ
. . . իմ Պապ . . . իմ Հայ ազգս . . . և աշու-
նեքը կը գոցէ : Լստուց շատերը իրենց
կեանքը կնքեցին . որոնք մէջը կան շատ յար-
գի եկեղեցականներ, այլ և այլ բարերար իշ-
խանազուներ, և աղքատասէր տիկիներ .
որոնց ըրած բարիքները մոռցուեցան . և
մօտ օրերս անխտիր այս վիճիւր տրուեցաւ ա-
նանց ամեն մէկուն զատ զատ իբր 'ի յիշատակ
յետմոյց,

Քանի խաղեր,

Լալալէթից,

Հերթաւոր էր :

« Լստուած տեսնայ և ողորմի :

« Բարեկամ մը » :

(Ըրաւայ Լիւ 418) :